# ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

03.10.2023 11:55



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիան 2023 թվականի հոկտեմբերի 3-ից սկսած ամեն օր՝ ժամը 14:00-17:30-ը (Հասցե՝ ք. Երևան, Զաքյան 7-2, 2-րդ հարկ) արցախցիների համար կազմակերպում են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Խորհրդատվության կազմակերպմանը կներգրավվեն նաև Արցախի փաստաբանների պալատի ներկայացուցիչները՝ԱՀ ՓՊ նախագահի Էրիկ Բեգլարյանի գլխավորությամբ:

Մարզերում իրավաբանական խորհրդատվության հետ կապված կազմակերպչական հարցերի համար արցախցիները կարող են կապ հաստատել (+374) 33 600 714 հեռախոսահամարով:

Նախաձեռնության գլխավոր նպատակն է աջակցել մեր տեղահանված հայրենակիցներին իրավական ոլորտին առնչվող ամենատարբեր հարցերում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })